

## **Աշխատանքային օրենսդրություն**

*վերապատրաստման դասընթաց (տևողությունը 24 ժամ)*

Աշխատանքային օրենսդրության առավել կիրառական կարգավորումների ներկայացում, հարց ու պատասխան, դասընթացի մասնակիցներին գործնական առաջադրանքների ներկայացում: Դասընթացի մասնակիցներին հանձնարարված գործնական առաջադրանքների կատարմանը վերաբերող խնդիրների քննարկում: Աշխատանքային հարաբերություններին վերաբերող, կազմակերպությունում առկա կոնկրետ խնդիրների իրավաչափ և օպտիմալ լուծումների ներկայացում:

### **Հիմնական թեմաները՝**

1. աշխատանքային օրենսդրության շրջանակ, գործողության ոլորտ և գործողությունը ժամանակի մեջ
2. կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերի բովանդակությանը և հնարավոր փոփոխություններին վերաբերող հարցեր
3. աշխատանքային հարաբերություններին վերաբերող ժամկետների հաշվարկ
4. աշխատանքի ժամանակացույցի հաստատում, փոփոխության մասին աշխատողին ծանուցում
5. աշխատաժամանակի հաշվառում գործատուի կողմից
6. աշխատաժամանակի գումարային հաշվարկ
7. արտաժամյա և գիշերային աշխատանքի ներգրավման ընթացակարգ՝ հնարավորություններ և սահմանափակումներ:
8. ոչ լրիվ աշխատաժամանակ
9. 24-ժամյա գրաֆիկով աշխատանքի ներգրավում
10. հերթափոխով աշխատողների համար աշխատաժամանակի արդյունավետ ռեժիմի ընտրության հետ կապված հարցեր
11. ծանր, վնասակար, առանձնապես ծանր և առանձնապես վնասակար աշխատանքների կատարման կարգավորումներ
12. ամենամյա արձակուրդի տրամադրման ժամկետներ, սահմանափակումներ
13. աշխատողներին աշխատավարձի հաշվարկային թերթիկ
14. գործատուի կողմից աշխատանքի ընդունվող անձին մասնագիտական ուսուցման հնարավորություններ և սահմանափակումներ:
15. աշխատողի հետ վերջնահաշվարկի կարգ
16. աշխատանքի վարձատրության կազմակերպման կարգը

17. աշխատավարձերի (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ աշխատավարձ՝ հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ և պարգևատրումներ) սահմանման և հաշվարկման արդյունավետ մեխանիզմներ
18. նվազագույն աշխատավարձի հաշվարկ
19. միջին աշխատավարձի չափի հաշվարկ
20. արձակման նպաստի չափի հաշվարկ
21. վարձատրության առանձնահատկություններ՝ համատեղությամբ աշխատանքի, ժամանակավոր աշխատանքային պայմանագրով աշխատանքի, աշխատանքի պայմանների ժամանակավոր փոփոխման, աշխատողին աշխատանքի չթույլատրելու, աշխատողի պարապուրդի, ոչ լրիվ աշխատաժամանակ կիրառելու, աշխատանքի ծավալի ավելացման, խոտան արտադրանքի, աշխատանքային նորմաները չկատարելու, աշխատողի մահվան, աշխատավարձը ժամկետանց վճարելու, աշխատողի առողջական վիճակի պատճառով այլ աշխատանքի փոխադրվելու, լրացուցիչ և հատուկ ընդմիջումների, առողջության ստուգման, աշխատանքը կատարելուց հրաժարվելու դեպքերում:
22. աշխատավարձից պահումների կատարելու հիմքեր և սահմանափակումներ,
23. ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի փոխհատուցում,
24. չվճարվող արձակուրդ,
25. աշխատողների գործուղումներ և դրանց ծախսերի հատուցումներ,
26. աշխատանքի առանձին պայմաններով կամ բնույթով պայմանավորված հատուցում,
27. աշխատավարձերի խթանիչ և ապախթանիչ նոր համակարգերի կիրառման առանձնահատկություններ: